Աշխատանքի ծածկագիր 2415

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 26.11.2021թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա.Ղուկասյանի
մասնակցությամբ անդամներ՝
Հ.Պետրոսյանի
Վ.Ենգիբարյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել են քրեական դատավարություն բաժնի 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ, 9-րդ, 13-րդ, 15-րդ, 17-րդ, 22-րդ, 25-րդ, 29-րդ, 32-րդ, 37-րդ հարցերը:

Քրեական դատավարության բաժին

Հարց 1

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից դ/տարբերակը այն է՝ որի նկատմամբ որոշում է կայացվել հանցագործության կատարման մեջ կասկածանքի հիմքով բերման է ենթարկելու մասին, մինչդեռ ներկայացվածներից ճիշտ տարբերակը ա-ն է, այն է՝ որի նկատմամբ մինչև մեղադրանք առաջադրելը խափանման միջոց է ընտրվել՝ ստորագրությունը չհեռանալու մասին, *քանի որ անձը ձեռք է բերում կասկածյալի կարգավիճակ այն ժամանակ, երբ* մինչև մեղադրանք առաջադրելը խափանման միջոց է ընտրվել ստորագրությունը չհեռանալու մասին,

Հարց 2

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից գ/ տարբերակը, այն է՝ եթե կան այլ հիմքեր հանցանքի կատարման մեջ կասկածելու անձին, որը քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու փորձ է կատարել կամ չունի բնակության մշտական վայր կամ բնակվում է այլ տեղանքում, *մինչդեռ ճիշտ պատասխանն է դ-ն՝ այն է՝* եթե նա գտնվում է ազատության մեջ և քննիչը որոշում է կայացրել նրան կալանավորելու մասին միջնորդություն ներկայացնել դատարան, *քանի որ հավակնորդի նշած տարբերակը չի բխում հարցի բովանդակությունից, իսկ դ/ տարբերակում նշված պատասխանը նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով որպես ձերբակալման հիմք:*

Հարց 3

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից դ/ տարբերակը, այն է՝ բոլոր պատասխաններն էլ ճիշտ են, *մինչդեռ ճիշտ պատասխանն է գ-ն՝ այն է՝* անձին մեղսագրվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ արարք, տուժողը հաշտվել է ենթադրյալ հանցանք կատարած անձի հետ և առկա է հարուցված քրեական գործ, *քանի որ ա/ և բ/ տարբերակներում բացակայում է քրեական գործ հարուցված լինելու հանգամանքը, այդ իսկ պատճառով հավակնորդի կողմից նշված տարբերակը չի կարող համարվել լիարժեք և ընդունելի:*

Հարց 5

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից դ/ տարբերակը, այն է՝ կոնկրետ բողոքի հանգամանքներով պայմանավորված իրավասու է կայացնել <<բ>> և <<գ>> կետերում նշված որոշումները, *մինչդեռ ճիշտ պատասխանն է գ-ն՝ այն է՝* բողոքը ճանաչելով հիմնավորված՝ որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին, *քանի որ բ/ տարբերակում նշված բողոքարկված որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգում Դատարանը քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման բողոքարկման պարագայում չի իրականացնում:*

Հարց 9

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից բ/ տարբերակը, այն է՝ այո, քանի որ դատավորը կաշկանդված չէ գործի մինչդատական վարույթում արված եզրահանգումներով, *մինչդեռ ճիշտ պատասխանն է դ-ն՝ այն է՝* ոչ, քանի որ դատավորն ունի կանխակալ կարծիք դատական քննության առարկայի (մեղադրանքի) վերաբերյալ, *քանի որ տվյալ դեպքում դատավորը գնահատել է առաջադրված մեղադրանքը:*

Հարց 13

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից դ/ տարբերակը, այն է՝ այո, քանի որ դատավորը կաշկանդված չէ գործի մինչդատական վարույթում եթե հաստատվել է հետաքննության մարմնի պետի կողմից, մինչդեռ ճիշտ պատասխանն է բ-ն՝ այն է՝ ոչ, քանի որ քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշում կայացնելու լիազորություն հետաքննության մարմինը չունի, *քանի որ այն պարունակում է ամբողջական պատասխան և բխում է հարցի էությունից:*

Հարց 15

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան նշել է առաջադրվածներից ա/ տարբերակը, այն է՝ ոչ, քանի որ տուժողին առաջինը հարցեր տալու իրավունք ունեն մեղադրանքի կողմը ներկայացնող սուբյեկտները:

Նկատի ունենալով, որ խնդրի ձևակերպումը հնարավորություն չի տալիս միանշանակ հետևության հանգելու, որ հավակնորդի կողմից տրված պատասխանը սխալ է, ուստի Հանձնաժողովը գտնում է, որ այն պետք է դիտել, որպես ճիշտ պատասխան և Գնահատման հանձնաժողովի կողմից նշանակված 0 միավորը դարձնել 1 միավոր:

Հարց 17

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից ա/ տարբերակը, այն է՝ ոչ, քանի որ հետաքննության մարմինն իրավունք չունի խուզարկություն կատարելու միջնորդություն ներկայացնելու դատարան, այն քննիչի ու դատախազի լիազորությունն է, մինչդեռ ճիշտ պատասխանն է դ-ն՝ այն է՝ ոչ, քանի որ հետաքննության մարմինը լիազորված է իրագործելու քննիչի հանձնարարության հիման վրա դատարանի որոշումը՝ խուզարկություն կատարելու թույլտվության մասին, քանի որ այն ամբողջական է և բխում է խնդրի բովանդակությունից:

Հարց 22

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան նշել է առաջադրվածներից ա/ տարբերակը, այն է՝ ոչ, քանի որ օրենքով առաջադրված մեղադրանքը խստացման կամ մեղմացման առումով ենթակա է լրացման կամ փոփոխման բացառապես այն դեպքում, երբ ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում (քր. դատ. օր-ի 309.1 հոդվածի 1-ին մաս),

Նկատի ունենալով, որ խնդրի ձևակերպումը հնարավորություն չի տալիս միանշանակ հետևության հանգելու, որ հավակնորդի կողմից տրված պատասխանը սխալ է, ուստի Հանձնաժողովը գտնում է, որ այն պետք է դիտել, որպես ճիշտ պատասխան և Գնահատման հանձնաժողովի կողմից նշանակված 0 միավորը դարձնել 1 միավոր:

Հարց 25

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան նշել է առաջադրվածներից բ/ տարբերակը, այն է՝ անհրաժեշտություն է առաջացել պարզելու մահվան պատճառը և առողջությանը հասցված վնասի բնույթը և ծանրության աստիճանը:

Նկատի ունենալով, որ խնդրի ձևակերպումը հնարավորություն չի տալիս միանշանակ հետևության հանգելու, որ հավակնորդի կողմից տրված պատասխանը սխալ է, ուստի Հանձնաժողովը գտնում է, որ այն պետք է դիտել, որպես ճիշտ պատասխան և Գնահատման հանձնաժողովի կողմից նշանակված 0 միավորը դարձնել 1 միավոր:

Հարց 29

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից ա/ տարբերակը, այն է՝ մեղադրական եզրակացությունը չի համապատասխանում օրենսգրքով սահմանված պահանջներին, մինչդեռ ճիշտ պատասխանն է դ-ն՝ այն է՝ ճիշտ պատասխանը բացակայում է, քանի որ այն ամբողջական է և բխում է խնդրի բովանդակությունից:

Հարց 32

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից բ/ տարբերակը, այն է՝ այո, եթե կան ապացույցների բավարար համակցություն առ այն, որ մյուս ամուսինը տեղեկացված է եղել, որ համատեղ սեփականությունն ավելացվել է հանցավոր ճանապարհով վաստակած միջոցների հաշվին, մինչդեռ ճիշտ պատասխանն է գ-ն՝ այն է՝ այո, եթե կան ապացույցների բավարար համակցություն առ այն, որ մյուս ամուսինը տեղեկացված է եղել, որ համատեղ սեփականությունն ավելացվել է հանցավոր ճանապարհով վաստակած միջոցների հաշվին, սակայն բացառապես այդ ավելացված մասի վրա, քանի որ այն ամբողջական է և բխում է խնդրի բովանդակությունից:

Հարց 37

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան նշել է առաջադրվածներից ա/ տարբերակը, այն է՝ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշմանը:

Նկատի ունենալով, որ խնդրի ձևակերպումը հնարավորություն չի տալիս միանշանակ հետևության հանգելու, որ հավակնորդի կողմից տրված

պատասխանը սխալ է, ուստի Հանձնաժողովը գտնում է, որ այն պետք է դիտել, որպես ճիշտ պատասխան և Գնահատման հանձնաժողովի կողմից նշանակված 0 միավորը դարձնել 1 միավոր:

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ *2415* ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը մասնակիորեն բավարարել: Քրեական դատավարության բաժնի 15-րդ, 22-րդ, 25-րդ, 37-րդ հարցերի պատասխանը գնահատել յուրաքանչյուրը 1 միավոր՝ ընդհանուր 4 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Վ.ԵՆԳԻԲԱՐՅԱՆ